կը դիմեմ Հայկազեան բառարանի ուր սոյն բառերն գործածող հեղինակներու վկայութիւնները յառաջ բերած կը գտնենք։

Նախնեաց բառերն են յեղյեղակ, յեղյեղումն, յեղումն, նահանջումն, նհանջումն, փոփոխումն։ Այս բառերուս վրայ Հայկազեանի մէջ գրուած կը գտնենք այսպէս։

ՅԵՂՅԵՂԱԿ.

Եղանակ տարւոյ. Արևադարձք. որպէս յն. τροπὴ « Մօտ ի յեղյեղական ամարայնոյ և ձմերայնոյ ». Փիլ. եկ. Բ. Հե։

ՅԵՂՅԵՂՈՒՄՆ.

Τροπὴ որ է յեղումն. իբր շրջան եղանակաց տարւոյ.

Արևադարձ. « Յեղյեղումնք արեգական զտարևորսն յայտնի երևեցուցանէ զժամանակս ». Փիլ. լիև. Դ. Ա։

« Արեգակն զյեղյեղմունս ժամանակաց գործէ փոփոխելով յաստեղատունս». Պիտ։

ՅԵՂՈՒՄՆ.

Եղանակ տարւոյ. Արևադարձ. շրջան լուսնի և քառորդք նոցա. « Զուգօրութիւնք և յեղումնք ամառնային և ձմեռնային». « Յեղմունք լուսնոյ եօթներկօք լինի Փիլ. լիև. Գ. Ա։

ՆԱՀԱՆՋՈՒՄՆ.

Նահանջ. նահանջելն, իլն. և Արևադարձ. « Ոչ տեսանէք զնահանջմունս երկեցս ի տարւոջ և զուգաւորութիւնս հանգոյն նմին ». Շիր։

ՆՀԱՆՋԵԱԼ.

Ամ, կամ Ամիս, կամ Օր. « Միւս ևս այլ ամիս յաւելումք ի վերայ երկոտասան ամսոյն, որ կոչի Նհանջեալ. զի յայն ամս քանզի պակաս գտանի. թիւք ընթացից լուսնի քան զթիւս արեգական, այս այսպէս կազմեցաւ, զի Նհանջեալ ամօք լիցի ». Շիր. զատկ։ « Զորս ամօք Նհանջել եղանակացն՝ երեսուն ամն ի նոյն կացուցանէ զպատկեր աւուրն ». Յօճակ։

ՓՈՓՈԽՈՒՄՆ.

Τροπὴ, conversio, mutatio. Եղանակ տարւոյ. Արևադարձ. « ի ժամանակի արդեանց արեգական փոփոխմանց ». Օր. ԼԴ. 14։

« Յառաջ քան զձմերական փոփոխմունս ». Եւս. քր. Ա։

Նախնեաց այս վեց բառերը, երեք դասակարգութեանց կրնանք բաժնել, ա. են որ թարգմանութեանց մէջ գործածած են, բ. են որ ինքնագիր գրութեանց մէջ, և գ. են որ թէ ինքնագրութեան և թէ թարգմանութեան մէջ։

Ա. — Թարգմանութեանց մէջ գործածածներն են՝ Յեղյեղակ, յեղյեղումն, փոփոխումն և հեղինակներ են. Փիլոն, Եւսեբիոս. Ս. Գիրք։

Բ. — Ինքնագիր գրոց մէջ կը գտնուին Նահանջումն և Նհանջեալ. և հեղինակն է Անանիա Շիրակացի։

Գ. — Թէ ինքնագրութեան և թէ թարգմանութեան մէջ կը գտնուի Յեղյեղումն միայն և հեղինակներն են Փիլոն և Մովսէս Խորենացի։

Յետ այսպէս բաժնելու անցնինք մի առ մի բառերուն վրայ խորհրդածութիւնք ընենք ճանչնալու համար թէ Նախնիք ինչ իմաստով գործածած են։

Շարունակելի Հ. ԽՈՐԵՆ Ս.

Չկայ ինչ մի աւելի փոփոխական, աւելի տարտամ հասարակաց կարծիքէն, բայց որքան և մտացածին լինի, շատ յանախ քան ինչ որ կարծուի՝ է անկեղծ, բանաւոր և արդար։

Բնաւ չխօսելն աւելի դիւրին է, քան սակաւ խօսելը. — Գեմպիս։

Ով որ աչքերով աւելի կը ծիծաղի քան շրթունքներով, նա անկեղծ է. — Ցոմմազէոյ։

Վատթար կեղծաւորն նա չէ որ կը շպարէ զախտը առաքինութեան ձևի տակ, այլ նա որ իր օգտին կը ծառայեցնէ զախտը, և չի վախեր ցոյց տալու դիմակի մը պէս, քողարկելու աւելի պժգալի ախտ մը, որ իրեն շահը կը ստիպէ զինքը ծածկելու։

digitised by A.R.A.R.@